ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Իբրև ընդհանրական Հայրապետը Հայ Առաքելական Եկեղեցու, հայրական սիրով ողջունում ենք Լիբանանի մեր սուրբ Եկեղեցու հաւատացեալներին և հայցում Աստուծոյ օգնականութիւնը որ վերծ պահի նրանց ամէն տեսակի փորձութիւններից, որպէսզի նրանք շարունակեն ապրել ու գործել լիբանանեան օրինեալ երկրի մէջ, բոլոր մահմեդական և քրիստոնեայ համայնքների մեծ ընտանիքում խաղաղ ու համերաշխ:

Այս առթիւ Մեր եղբայրական սիրոյ ողջոյնն ենք առաքում յատկապէս մեր սուրբ Եկեղեցու Կիլիկեան Աթոռի Գահակալ՝ Նորին Սրբութիւն Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսին և նրա գործակիցներին, մաղթելով նրանց Սուրբ Հոգւոյ աստուածային ուժն ու եռանդը, որպէսզի անվտանգ ու ապահով պահպանեն իրենց եկեղեցիները և համայն հայ հաւատացեալներին ի Լիբանան:

Մենք, լսելով վերջերս Պէյրութում տեղի ունեցած աղետալի դէպքերի և սպանութիւնների մասին, ուղղեալ Հայ Եկեղեցու կաւակների դէմ, Մեր խոր վիշտն ու վրդովմունքն ենք յայտնում և ապասում, որ վերջ գտնեն հակահայ արարքները Լիբանանի մէջ, վասնզի Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռը ի Սուրբ Էջմիածին և համայն մեր հաւատացեալ ժողովուրդը ի Սովետական Հայաստան չեն կարող անտարբեր մնալ, երբ իրենց հաւատակից քոյրերի ու եղբայրների կեանքը և մարդկային իրաւունքները Լիբանանում կամ այլուր աշխարհի վրայ, վտանգւում են ու ոտնակոխ արւում անպատասխանատու ուժերի կողմից:

Մեր տնական աղօթքն է, որ աշխարհում ամենուրեք յաղթանակի մարդկանց և ազգութիւնների խաղաղ գոյակցութեան ու համերաշխ գործակցութեան ոգին, որը մեր օրերի աշխարհում միակ հնարաւոր ճանապարհն է մարդկային կեանքի բարօրութեան, առաջադիմութեան ու երջանկութեան:

Թող բարին Աստուած այդ խաղաղարար ոգին առատապէս բաշխի լիբանանեան սուրբ գրական երկրին և այնտեղ բնակուող մահմեդական ու քրիստոնեայ բոլոր համայնքներին, որպէսզի Միջերկրականի Մարգարիտը շուտով վերագտնի իր երբեմնի լուսաւոր կեանքն ու միջազգային հեղինակութիւնը:

ՎԱԶԳԷՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
4 յունիս 1986 թ.

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Խորապես վգացված ենք սիրո և հոգատարության պատգամի համար՝ ուղղված լիբանանահայ մեր համայնքին այս տագնապալի ժամանակներում: Ձեր պատգամը արդեն հրապարակվել է հայկական մամուլում: Ամբողջ սրտով շնորհակալ ենք Ձեր հայրական ոգով տոգորված վերաբերմունքի համար:

Եղբայրական սիրով՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Անթիլիաս,
17 հունիսի 1986 թ.